ԱՂՎԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՂԵՐՍԸ ԱՇՏԻՇԱՏԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԵՏ

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աղվենի սահմանագիր ժողովի կանոնները հանդիսանում են վաղ ավատատիրական Աղվանքի և Հայաստանի ուշագրավ իրավաբանական հուշարձան։ Այդ կանոնները մարմնավորում են Աղվանքի աշխարհիկ և հոգևոր գասերի հարաբերությունը՝ ժամանակի իրավաբանական ըմբռնումների կրեստով։ Աղվենի կանոնները բերվում են Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ և «Կանոնագիրք Հայոց»-ում։

Գիտության մեջ իշխում է այն կարծիքը, թե Աղվենի կանոններն ընդունվել են Վաչագան III-ի (Բարեպաշտի) թագավորության օրոք՝ V դարի վերջերին։ Այսպես են կարծել Ք. Պատկանյանը, Մ. Բարխուդարյանը, Մ. Օրմանյանը, Հ. Աճառյանը, Կ. Տրեվերը[1]։ Նրանց կարծիքը հենվում է Կաղանկատվացու Պատմության առաջին հատորի ԻԳ գլխի վրա։ Այստեղ պատմիչը սուրբ մասունքների որոնման առիթով մի քանի անգամ հիշատակում է Վաչագան Բարեպաշտին, մեկ անգամ էլ Աղվանքի հոգևոր առաջնորդ Շուփհաղիշոյին, որպես Վաչագան III-ի ժամանակակցի և գործակցի. «Եւ առեալ թագաւորին ընդ ինքեանք զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ զընայրս»[2]։ Նույն հատորի ԻԶ գլխում Կաղանկատվացին բերում է Աղվենի ժողովի կանոնները, ուր կարդում ենք. «Ես Վաչական՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշոյ արքեպիսկոպոս Պարտաւայ...»[3]։ Այսպիսի պայմաններում, բնականաբար, պիտի ենթադրվեր, որ «Ես Վաչական՝ Աղուանից արքայ» ասելով, պիտի հասկանալ Վաչագան III-ին (Բարեպաշտին), որովհետև Աղվանքի պատմությանը հայտնի է «Շուփհաղիշոյ» անունով միայն մեկ հոգևոր առաջնորդ։

Այս կարծիքը կարելի կլիներ վերջնական համարել և այդ ուղղությամբ հետագա պրպտումները առարկայազուրկ, եթե չլիներ Կաղանկատվացու Պատմության 3-րդ հատորի ԻԳ գլուխը։ Այստեղ պատմիչը բերում է Աղվանքի հոգևոր հարերի հետևյալ անվանակարգը. «1. ս. Եղիշայ, 2. ս. Գրիգորիս, 3. ս. Շուփհաղիշու, 4. տ. Մատթէոս, 5. տ. Սահակ, 6. տ. Մովսէս, 7. տ. Գանգ, 8. տ. Ղազար, 9. տ. Գրիգոր, 10. տ. Զաքարիա, 11. տ. Դավիթ, 12. տ. Յովհան, 13. տ. Երեմիա, 14. տ. Արաս (551 թ.)»[4] և այլն։

Այս անվանակարգի համաձայն Շուփհաղիշոն հաջորդել է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսին, որն, ինչպես հայտնի է, նահատակվել է 338 թ.։ Հասկանալի է, որ նույն Շուփհաղիշոն չէր կարող լինել 487—510 թթ. թագավորած Վաչագան III-ի ժամանակակիցը և միևնույն ժամանակ՝ Գրիգորիսի հաջորդը։ Հակասությունն ակնառու է։ Այդ բանը առաջին անգամ նկատել են Գոշը և Գանձակեցին։ Վերջինս իր պատմության մեջ նշում է. «Բայց վասն առնս այսորիկ յաւուրս կարգելոյ՝ երկմտութիւն գոյ մեզ. զի որ գրեաց զպատմութիւնն Աղուանից, զայս անունս կարգէ յաւուրս

---

[1] Տե՛ս „История Агван Моисея Каганкатваци", перевод с армянского и предисловие К. Патканяна, СПБ, 1861, էջ 11, 303, 310։ Մ. Մուրատյան, Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Յերուսաղեմ, 1872, էջ 254։ Մակար Բարխուդարյան, Պատմութիւն Աղուանից, Ա հատոր, Վաղարշապատ, 1902, էջ 80։ Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. 1, Կ. Պոլիս, 1912, էջ 317։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երևան, 1962, էջ 38։ К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э.—VII в. н. э, М.—Л., 1959, էջ 183, 293։

[2] «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 61։

[3] սույն տեղում, էջ 66։

[4] Կաղանկատվացի, էջ 274—275։

Վաչագանայ բարեպաշտի լեալ. և այժմ չկայ ո՛չ ինքն, զոր եդ Վաչագան արքայ ամենայն եպիսկոպոսօքն Աղուանից...»[5]։

Գոչը[6] և Գանձակեցին[7] Շուփհաղիշոյի անվան հետ կապված հակասությունը հարթում են հետևյալ կերպ. 1) Գրիգորիսին անվանակարգի 2-րդ տեղից տեղափոխում են 8-րդ թվակարգի տակ, համապատասխանաբար առաջ մղելով Շուփհաղիշոյ — Ղազար անունները, 2) անվանակարգից հանում են 9-րդ համարի տակ նշված Գրիգորի անունը, մերժելով նրա գոյությունը, 3) Գոչը տեր Մովսեսի փոխարեն ընդունում է տեր Կարենի հայրապետությունը։

Հետաքրքիր է նշել, որ Շուփհաղիշոյի անվան կապակցությամբ երկմտություն նկատվում է նաև Մխիթար Այրիվանեցու մոտ։ Նա մի կողմից անվերապահորեն ընդունում է Աղվանքի հոգևոր առաջնորդների հաջորդության Կաղանկատվացու անվանակարգը[8], ուր Շուփհաղիշոն նշվում է իբրև հաջորդ Գրիգորիսի, իսկ նույն աշխատության 48-րդ էջում, ուր նա խոսում է պատմական դեմքերի ժամանակագրության մասին, կարդում ենք՝ «Սուրբ Շուփհաղիշոյ ամք տեառն 500»։

Այս հակասությունը գրավել է նաև մի խումբ հայագետների ուշադրությունը՝ Մ. Բարխուդարյանի, Հ. Աճառյանի, Ն. Ակինյանի։ Մ. Բարխուդարյանը, հենվելով Մխիթար Այրիվանեցու վերոհիշյալ հաղորդման վրա, Շուփհաղիշոյին համարում է Վաչագան Բարեպաշտի ժամանակակից[9]։

Հ. Աճառյանը փորձել է այդ հակասությունը հարթել՝ զանազանելով երկու Շուփհաղիշո. «1. Շուփհաղիշոյ արքեպիսկոպոս Աղուանից, եղավ կաթողիկոս Աղուանից՝ իբրև հաջորդ Գրիգորիս Ա կաթողիկոսի... 12. Շուփհաղիշոյ արքեպիսկոպոս Պարտավի, մասնակից Դվինի «506 թ եկեղեցական ժողովին, որ գումարել էր Հայոց Բարկեն Ա կաթողիկոսը. անդամ Աղուենի ժողովի Վաչագան Գ-ի օրով (Զ դար)»[10]։ Հ. Աճառյանի կարծիքը չունի պատմական կռվան և այսու դժվար է նրա հետ համաձայնել։

Աղվենի ժողովի հրավիրման ժամանակի մասին հետաքրքիր և ինքնատիպ ուսումնասիրություն ունի Ն. Ակինյանը[11], որին հանգամանորեն կանդրադառնանք փոքր ինչ հետո։

Շուփհաղիշոյի անվան վրա այսչափ ծանրանալը պատահական չէր։ Եթե Շուփհաղիշոն իրապես չի եղել Վաչագան III-ի ժամանակակիցը, ապա, հասկանալի պատճառով, կասկածելի է դառնում Աղվենի ժողովի հրավիրումը Վաչագան III-ի օրոք։ Այս փակուղուց դուրս գալու համար մնում է դիմել Աղվանքի թագավորների անվանակարգին և Աղվենի կանոնների պատմա-իրավական վերլուծությանը։

Կաղանկատվացու[12] և Գանձակեցու[13] հաղորդումների համաձայն Աղվանքում հաջորդաբար թագավորել են. 1. Վաչագան քաջ (առաջին), 2. Վաչե (առաջին), 3. Ուռնայր, 4. Վաչագան (երկրորդ), 5. Մրհավան, 6. Սատո, 7. Ասա, 8. Եսվաղեն (Արսվաղեն), 9. Վաչե (երկրորդ), 10. Վաչագան Բարեպաշտ (երրորդ) և այլն։ Մխիթար Այրիվանեցու անվանակարգը էապես տարբերվում է վերոհիշյալից։ Նա գտնում է, որ Աղվանքում հաջորդաբար թագավորել են՝ Առան, Ուռնայր, Վաչագան, Վաչե, Հոչադան, Միրհավան, Սատո, Ասա, Եսվաղեն, Միհր, Արմայել և այլն[14]։ Չնայած Այրիվանեցու անվանակարգի ակներև տարբերության, այնուհանդերձ այս պատմիչի անվանակարգի համաձայն էլ Ուռնայրին փոխարինում է Վաչագանը, իսկ Վաչեին՝ Հոչադանը։

Այսպիսով, Աղվանքում թագավորել են Վաչագան անունով երեք թագավորներ. I՝ Վաչագան քաջ (առաջին)։ Սա Աղվենի ժողովին մասնակցել չէր կարող, որովհետև, ամենայն հավանականությամբ, թագավորել է III դարի վերջին և IV դարի սկզբներին։ II՝ Վաչագան (երկրորդ). սա

---

5 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիր. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 194։

6 Մխիթար Գոշ, Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհի ի մէջ ԺԲ դարու, Հայապատում, պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 384։

7 Կիրակոս Գանձակեցի, էջ 194։

8 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 19։

9 Մակար Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 80։

10 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 184։

11 Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմությունն Աղվանից. «Հանդես ամսօրյա», 1953, № 1—3, 4—6, 7—9, 10—12։

12 Կաղանկատվացի, էջ 32—33։

13 Գանձակեցի, էջ 193։

14 Մ. Այրիվանեցի, էջ 19։

փոխարինել է Ուռնայրին։ Ուռնայրի թագավորության սկիզբը հայտնի չէ։ Գանձակեցին ասում է. «Սա (Ուռնայրը — Ս. Հ.) եկեալ առ մեծ արքայն Հայոց Տրդատ, և առ սուրբն Գրիգորիոս, մկրտի ի նմանէ»[15]*։ Այս արտահայտությունը ենթադրել է տալիս, որ Ուռնայրի թագավորության մոտավոր սկիզբը կարելի է համարել Տրդատի և Գրիգոր Լուսավորչի գործունեության ժամանակաշրջանը՝ 315—325 թթ.։ Ուռնայրը թագավորել է երկար ժամանակ։ Սրա օրոք մասքութների մեջ քրիստոնեություն տարածելու կապակցությամբ նահատակվում է Լուսավորչի թոռ Գրիգորիսը։ Ըստ Կաղանկատվացու և Այրիվանեցու Գրիգորիսին հաջորդում է Շուփհաղիշոն։ Ուրեմն, Շուփհաղիշոն իր կաթողիկոսությունը սկսել է Ուռնայրի թագավորության շրջանում։ Ուռնայրը եղել է Աղվանքի նշանավոր թագավորներից մեկը։ Սրա և Շուփհաղիշոյի ջանքերով Աղվանքի ներքին կյանքում իրագործվեցին եկեղեցու շահերից բխող մի շարք միջոցառումներ։ Դա երևում է Վաչե II-ին ուղղված Գյուտի թղթից. «Այսու երկնաւոր բարեօք լցեալ՝ եկն Ուռնայր արքայ եմուտ յաշխարհն Աղուանից, ուսոյց և կատարեաց զնոսա առաքելական կանօնք. ընկալան ամենեքեան զդրոշմն երկնաւոր և գրեցան ի ժառանգութիւն երկնաւոր։ Հալածեցան դեք աշխարհիդ, խափանեցան զոհք և ճենճերք, ամաչեաց մոլորութիւնն, բարձրացաւ ճշմարտութիւնն, թագաւորեաց լոյսն աներևոյթ մերժեցաւ կամաւոր խաւարն.* կարգեցան երէխայրիք եկեղեցւոյ, տասանորդեցան պտուղք կալոյ և հնձանաց, անդոց և խաշանաց և ամենայն ընտանի անասնոց. Նա և եօղ երկրին ի նոյն վիճակեցաւ և հաստատեալ կալաւ կարգ ուղղութեան առ նախնեօքն ձեռովք *հանուռք և հարքն քոյով երանելեաւ մինչև ի ժամանակս քոյոյ սքանչելի տէրութեանդ» (ընդգծումը մերն է — Ս. Հ.)*[16]*։ Այս բոլոր միջոցառումները իրականացվում էին Շուփհաղիշոյի նախաձեռնության և ակտիվության պայմաններում և հենց այդ ամենի համար նա դասվել է «սրբերի» կարգը։*

Քաղաքական մակընթացության պատճառով մենք Ուռնայրին տեսնում ենք իբրև պարսից արքա Շապուհ Բ-ի դաշնակից։ Նա իր զորքով 371 թ. մասնակցում է Ձիրավի ճակատամարտին՝ ընդդեմ հայոց Պապ թագավորի և կրում պարտություն։ Խորենացին[17] *և Կաղանկատվացին*[18] *նշում են, որ Ուռնայրը ճակատամարտում խոցվում է Մուշեղ Մամիկոնյանից և նրան պատերազմից դուրս են հանում։ Ամենայն հավանականությամբ խոցված Ուռնայրին փոքր ժամանակ անց փոխարինում է Վաչագան երկրորդը։ Վաչագան երկրորդի թագավորության մոտավոր սկիզբը կարելի է ենթադրել 371—372 թթ.։ Որքա՞ն է տևել նրա թագավորության շրջանը, դժվար է որևէ բան ասել։ Միայն գիտենք, որ Վաչագան երկրորդին հաջորդել են Մրհավանը, Սատոն. Ասան և Արսվաղենը (Եսվաղենը)։*

Կաղանկատվացու Պատմության II հատորի «Գ» գլխում ասվում է. «Յորժամ ժամանակի Թէոդոս Փոքր Յունաց էր կայսր (408—450 թթ.— Ս. Հ.) և Վռամշապուհ Հայոց թագաւոր (387/8—413/14—Ս. Հ.), և Յազկերտ Պարսից արքայ (399—420—Ս. Հ.) և Արսվաղէն Աղուանից թագաւոր՝ եկեալ երանելին Մեսրոպ յԱղուանս... առ հայրապետն մեր Երեմիա և թագաւորն Արսվաղէն...»[19]*։ Դա պետք է տեղի ունեցած լիներ 408 թ. ոչ վաղ և 414 թ. ոչ ուշ. այսինքն՝ Թեոդոսի գահակալության սկզբից ոչ վաղ և Վռամշապուհի մահվանից ոչ ուշ։ Ուրեմն, եթե ենթադրենք Վաչագան II-ի թագավորության սկիզբը 372 թ., ապա կստացվի, որ 43 տարիների ընթացքում (372—414 թթ.) Աղվանքում թագավորել են՝ Վաչագան II-ը, Մրհավանը, Սատոն, Ասան և Արսվաղենը (վերջինիս թագավորությունը շարունակվել է նաև 414 թ. հետո)։ Մեզ թվում է, որ 43 տարիների ընթացքում 5 թագավորներ ունենալը անհավանական չէ։*

Պապ թագավորի մահից հետո, մոտավորապես նույն ժամանակահատվածում հայերը նույնպես ունեցել են 5 թագավորներ՝ Վարազդատ, Արշակ Գ. Վաղարշակ, Խոսրով Գ և Վռամշապուհ։

Ի տարբերություն մյուս երկու Վաչագանների, Վաչագան II-ը չի կրել որևէ պատվանուն։ Նշված պատմիչները միայն հիշատակում են նրա անունը, առանց նշելու նրա վարքը։ Սակայն նույն պատմիչները այլ կերպ են գնահատել Վաչագան III-ին։ Սա իր հայրենի Աղվանքում և Հայոց աշխարհում ճանաչված է եղել որպես «բարեպաշտ»։ Այդ պատվանունը Վաչագան III-ին շնորհել է Աղվանքի եկեղեցին՝ ի հատուցումն նրա ջերմեռանդ աստվածասիրության և եկեղեցաշեն գործունեության։ Եթե այս Վաչագանի օրոք է հրավիրվել Աղվենի ժողովը և կանոններ կարգվել.

---

15 *Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 193։*

16 *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 16։*

17 *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց Պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1961, էջ 305, 327։*

18 *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 24։*

19 *Նույն տեղում, էջ 90։*

ապա նրա ջերմեռանդ աստվածասիրությունն ու եկեղեցաշեն գործունեությունը անպայման պիտի գրսևորվեին Աղվենի կանոնների բովանդակության մեջ։

Ուսումնասիրությունից հանդում ենք այն եզրակացության, որ Աղվենի ժողովը չէր կարող հրավիրված լինել Վաչագան Բարեպաշտի օրոք։

Մենք արդեն նշեցինք, որ ըստ Աղվանքի հոգևոր հայրերի անվանակարգի, Շուփհաղիշոն գլխավորել է Աղվանքի եկեղեցին IV դարում, ըստ Կաղանկատվացու և Այրիվանեցու՝ Գրիգորիսից հետո, ըստ Գոշի և Գանձակեցու՝ Գրիգորիսից առաջ։ Մի կողմ թողնելով Գոշի և Գանձակեցու կարծիքների տարբերությունը, չորս աղբյուրներն էլ Շուփհաղիշոյին համարում են IV դարի գործիչ։ Նա հոգևոր հայր է եղել Ուռնայրի և Վաչագան II-ի օրոք։ Շուփհաղիշոն պատմիչի մոտ դառնում է Վաչագան III-ի ժամանակակից՝ պատմություն շարադրելու Կաղանկատվացու մեթոդի հետևանքով։ Ք. Պատկանյանը և Մ. Արեղյանը նկատել են, որ պատմիչը նյութերը խմբավորում է ինչպես պատահում է, առանց մշակելու կամ քննադատելու, առանց ուշադրություն դարձնելու փաստերի ներքին կապի և ժամանակագրական հաջորդականության վրա[20]։

Այլ առիթով մենք նշել ենք, որ Կաղանկատվացին իր Պատմության ԻԳ գլխի վերջում գրում է. «Եւ առեալ թագաւորին ընդ ինքեանք զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ գնայր»։ Սակայն բանն այն է, որ մինչև այդ Կաղանկատվացին նշխարների հայտնաբերմանը նվիրված բազում եկեղեցական հանդեսների մասին խոսելիս ոչ մի անգամ չի մտաբերում Շուփհաղիշոյին, նրան մասնակից չի դարձնում հանդիսավոր ծեսերի կատարմանը։ Նվազագույն արժեքի անցքերը ջանասիրաբար նկարագրող պատմիչը չէր կարող անտարբերություն դրսևորել մասունքների որոնմանը մասնակցած, բազում հանդեսներ կազմակերպած հոգևոր հոր նկատմամբ։ Պատմիչը առաջին հատորի՝ մասունքների որոնման նվիրված ԻԱ գլխում յուրահատուկ ձևով օգտագործում է Աղվենի ժողովին մասնակցած հոգևորականներից երեքի անունը։ Այսպես, եթե Աղվենի որոշման մեջ նշված է՝ «Մանասէ Կապաղուս եպիսկոպոս», ապա ԻԱ գլխում՝ «արքունի երէց Մանասէ»։ Մինչդեռ Աղվենի ժողովի կանոնների համաձայն արքունի երեցը եղել է «Թոմայ»։ Կամ, եթե Աղվենում արձանագրված է՝ «երէց Յովել», ապա ԻԱ գլխում՝ սարկավագ «Յովել»։ Անփոփոխ է մնացել միայն Մատթեի անունը և հոգևոր կոչումը։ Աղվենում նշված է՝ «Մաթէ Դարահոճոյ երէց»[21], իսկ ԻԱ գլխում՝ «Դարահոչ (Դարահալու) երէց Մատթէ»։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Աղվենի ժողովի կանոնների մեջ մենք չենք գտնում երեցներ Նսթանի և Գետևունի անունները, որոնք նույնպես եղել են սուրբ մասունքների որոնման մասնակիցներ։

Ուսումնասիրողների տեսադաշտից վրիպել է մի այլ հանգամանք։ Հոգևոր հայրերի անվանակարգից մեզ հայտնի է, որ Շուփհագիշոյին հաջորդաբար փոխարինել են Մատթեն և ապա՝ Սահակը։ Եթե սրանք եղել են իրական հոգևոր հայրեր, ապա նրանցից գոնե Մատթեն պիտի լինի Շուփհաղիշոյի ժամանակակից և Աղվենի ժողովի մասնակից։ Եվ իրոք, նրանց անունները արձանագրված են Աղվենի ժողովի որոշման մեջ, Մատթեն՝ իբրև Պարտավի երեց, իսկ Սահակը՝ իբրև Ուտո քորեպիսկոպոս։ Այս հանգամանքի հաստատումը կարևոր նշանակություն ունի այն կապակցությամբ, որ Շուփհաղիշո — Երեմիա ժամանակահատվածում (372—415 թթ.) 9 հոգևոր հայրերի գոյությունը (Մատթե, Սահակ, Մովսես, Պանդ, Ղազար, Զաքարիա, Դավիթ, Հովհան) համարվել է կասկածելի։ Ուրեմն, Շուփհաղիշո—Մատթե—Սահակ հոգևոր հայրերի եռյակը ազատագրվում է կասկածելիների խմբից և, միևնույն ժամանակ, սեղմվում է մյուսների շրջանը։

Սակայն այդ փաստը մեզ համար կարևոր է մեկ այլ տեսակետից ևս, այն է՝ Շուփհաղիշոն և վերոհիշյալ արքեպիսկոպոսները IV դարի անձեր են։ Այդ եռյակից որևէ մեկին շղթայից անջատելը դառնում է անհնարին։

Մյուս վեց կաթողիկոսների գոյությունը պատմական կարճ ժամանակահատվածում, մեզ թվում է, կարելի է բացատրել արտաքին և ներքին պատճառներով՝ Շուփհաղիշո — Երեմիա ժամանակահատվածում հոգևոր դասի անկայուն կացությամբ։ Իբրև արտաքին հանգամանք՝ Պարսից պետության և մոգության տևական ճնշմամբ, իսկ իբրև ներքին՝ ազատների և հոգևորականների շահերի խոր հակամարտությամբ։ Այդպիսի հակամարտության գոյության մասին վկայում է Աղվենի ժողովի որոշումը, ուր ասված է. «Յամս Վաչականայ՝ Աղուանից արքայի, բազում հակառակութիւն լինէր ի մեջ աշխարհականաց և եպիսկոպոսաց, քորեպիսկոպոսաց և քահանայից, ազատաց և ոամկաց»[22]։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վաչագան III-ի օրոք «բազում հակառա-

---

20 «История Агван...», էջ 12—13, Մ. Ա ր ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, գ. I, Երևան, 1944, էջ 457։

21 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 50, 51, 65։

22 Նույն տեղում, էջ 65։

կությունը» նրանց միջև բացատրվում է։ Վաչագան Բարեպաշտը հանդես էր գալիս իբրև հոգևոր դասի գաղափարների և շահերի ջերմեռանդ պաշտպան։ Մինչև Աղվենի ժողովի մասին խոսելը, Կաղանկատվացին, մեկ այլ առիթով, նկատում է, որ «բոլոր իսկ ուխտ եկեղեցւոյ մեծարեալ և յարգեալ էին յամս Թագաւորութեան բարեպաշտ արքային Վաչականայ»[23]։ Այս երկու անհամատեղելի մտքերը լրացուցիչ անգամ կարող են հաստատել այն փաստը, որ նրանք արտահայտում են տարբեր Վաչագանների պատմական դարաշրջանը և իրական հարաբերությունները։ Միայն «բազում հակառակության» պայմաններում կարող էին հաճախակի փոփոխված լինել Աղվանքի հոգևոր հայրերը, ինչպես աշխարհիկ իշխանության ճնշման, այնպես էլ հոգևոր դասի կամահայտնության պատճառով։

Թերևս այդ վեց կաթողիկոսների ժամանակագրությունը մեզ է հասել խախտված ձևով։

Մենք չբավարարվեցինք միայն Շուփհաղիշոյի անձնավորությունը որոշելու խնդրով։ Փորձեցինք գտնել Աղվենի ժողովին մասնակցած և կանոններն իրենց մատանիով հաստատած 14 մեծատոհմիկ աշխարհականներից գոնե մեկի անվան հետքը Կաղանկատվացու և մյուս պատմիչների մոտ։ Դա կարևոր է, քանզի լրացուցիչ կռվան կարող է հանդիսանալ մեր կարծիքը հաստատելու համար։ Կաղանկատվացին իր Պատմության մյուս գլուխներում նրանցից ոչ մեկի անունը չի հիշատակում։ Սակայն, բարեբախտաբար, Կորյունի և Խորենացու մոտ մենք գտնում ենք նրանցից մեկի՝ Գարգմանի իշխան Խուրսի անունը (տե՛ս Կորյուն, էջ 117։ Խորենացի, էջ 337)։ Ըստ Կորյունի, Մաշտոցն Աղվանքում գրագիտություն տարածելուց հետո ուղևորվում է Գարդման։ Այստեղ նրան ջերմորեն ընդունում է իշխան Խուրսը։ Ամենայն հավանականությամբ, դա պետք է տեղի ունեցած լինի 415—420 թթ.։ Ըստ Խորենացու Մաշտոցն այնտեղ է մեկնում «հեթանոսական աղանդից մնացած դառն արմատը» արմատախիլ անելու համար (հիշենք Աղվենի ժողովի հրավիրման պատճառը՝ «բազում հակառակությունները»)։ Մեզ թվում է անհավանական չէ այն ենթադրությունը, որ Աղվենի կանոնների վերջաբանում և Կորյունի ու Խորենացու մոտ նշված Խուրսը Աղվենի ժողովին մասնակցած միևնույն Խուրսն է։ Ինչպես կտեսնենք հետագայում, Աղվենի ժողովը տեղի է ունեցել 372—375 թթ.։ Այս երկու դեպքերի միջև անցել է 40—45 տարի։ Մի դեպքում՝ Աղվենում մենք գործ ունենք Գարգմանի երիտասարդ իշխան Խուրսի, իսկ երկրորդ դեպքում՝ իր դարն ապրած նույն Գարդմանատեր Խուրսի հետ։ Այս առնչությամբ, կարծում ենք, արդարացված կլինի, եթե Կաղանկատվացու Պատմության մեջ կատարվի մի այսպիսի կետադրական ուղղում։ Կաղանկատվացու Պատմության Շահնազարյանի և Էմինի հրատարակությունների մեջ նշված է՝ «Վարդան քաջ Գարդմանատէր, Խուրս...»։ Մեր կարծիքով պետք է լինի՝ «Վարդան քաջ, Գարդմանատէր Խուրս...»։

Այնուհետև, իր պատմության առաջին հատորի ԺԶ գլխում պատմիչը նշում է՝ «Եւ ազգի ազգի աղանդք չարախոհն սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ մարդիկ աշխարհին Աղուանից»[24]։ Այս վիճակը երկրում ստեղծվում է կրոնամոլ պարսից Պերոզի (457—484 թթ.) տիրակալության և երկրի անիշխանության շրջանում։ Կասկածից վեր է, որ այդ տարիներին մծղնեից և նեստորական աղանդները լրջորեն անհանգստացնում էին նաև Աղվանքի ուղղափառ եկեղեցուն։ Սակայն Աղվենում հավաքված հոգևոր առաջնորդները և բարեպաշտ Վաչագանը «մոռացել են» կանոնական նորմեր ընդունել եկեղեցու ոխերիմ թշնամու դեմ։ Այս անտրամաբանական վարքագիծը դարձյալ անհամատեղելի է Աղվենի ժողովի հետ, եթե ընդունենք, որ Աղվենի ժողովը տեղի է ունեցել Վաչագան III-ի ժամանակ։

Սակայն սրանով չեն վերջանում հակասությունները։ Մեր կասկածներն ավելի են խորացնում երկու այլ հանգամանքներ։ Այսպես, Կաղանկատվացին գրում է. «Պատուհաս մեծ և տուգանս ի վերայ կարգէր՝ որ ոք բադին արասցէ և դիւթ հնարեսցէ և կամ զինչևիցէ դիւցազգեաց պաշտօն տարցէ և զկարգս քրիստոնէութեան ամրողջ և հաստատուն ոչ պահեսցէ։ Զկախարդս և զգիւթս և զքուրմս յետ միանգամ և երկիցս խրատելոյ, եթէ դարձեալ ի նմին չարութեան գտանէին ի գործ չարաչար կապանօք և գանիւք ի դուռն արքունի հաւուցեալ մեծագոյն պատուհասիւ պատժէր զոմանս խեղդելով, զոմանս շկօթակս առնելով և զոմանս ի ստրկութիւն արկանելով...»[25]։ Սրանք երկրում իրականացվել են Վաչագան Բարեպաշտի օրոք։ Սակայն բովանդակությամբ և ներգործության միջոցներով կանոնական բնույթ կրող այս միջոցառումները դարձյալ չեն արտահայտվել Աղվենի ժողովի որոշումների մեջ։ Դեռ ավելին, նույն ժամանակաշրջանում Աղվանքում տարածված է եղել նաև մատնահատության ահավոր աղանդը, որը Բարեպաշտի անողոք ջանքերով

23 Նույն տեղում, էջ 38։
24 Նույն տեղում, էջ 33—34։
25 Նույն տեղում, էջ 38։

վերացվում է[26]։ Եվ դարձյալ Աղվենի ժողովի կանոններում մենք չենք գտնում դարաշրջանը հուզող այս հարցերի իրավական կարգավորումը։

Ցուրաքանչյուր օրենք կամ կանոնախումբ իր դարաշրջանի ծնունդն է։ Նրանք արտահայտում են տիրապետող աշխարհիկ և հոգևոր դասերի նյութական և հոգևոր շահերը, ուժերի փոխհարաբերությունը, նրանց կամքը։ Նրանք իրենց վրա կրում են դարաշրջանի իրավագիտակցության կնիքը։ Բայց ինչո՞ւ Աղվենի կանոնների վրա չի պրոշմած Վաչագան III-ի դարաշրջանի կնիքը։ Պատճառն այն է, որ Աղվենի սահմանագիր ժողովը տեղի է ունեցել ոչ թե Վաչագան III-ի, այլ Վաչագան II-ի գահակալության օրոք։ Դա պատմական մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Աղվանքի նախարարներին, իրենց թագավորի գլխավորությամբ, հուզում էին այլ խնդիրներ, այլ շահեր, որոնք իրենց էությամբ հակադիր էին անգամ հոգևորականության շահերին։ Աշխարհիկ և հոգևոր տերերի շահերի հակադրությունը երկրում այնքան սուր բնույթ էր կրում, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ հրավիրվում է Աղվենի ժողովը, ծագած «բազում հակառակություններ» հարթելու համար։ Աղվենի կանոնները ցույց են տալիս, թե որոնք են այդ հուզող հարցերը և շահերը։

Ամփոփենք։ Կաղանկատվացին յուր Պատմությունը մագաղաթին հանձնելիս շփոթել է Վաչագան II-ի և Շուսիճաղիշոյի գործունեության ժամանակաշրջանները։ Վաչագան II-ի գործունեությունը վերագրվել է Վաչագան III-ին։

Աղվենի ժողովի հրավիրման ժամանակը մոտավոր ճշտությամբ որոշելու համար կարևոր նշանակություն ունեն Կաղանկատվացու Պատմության մեջ նշվող երկու հանգամանքներ։ Ըստ պատմիչի ժողովը տեղի է ունեցել «յամսեանն Մարերի՝ որ օր երեքտասան էր ամսոյնս, զի հովոցի տեղուոջս»[27], այսինքն մի ժամանակ, երբ թագավորական ընտանիքը գտնվում էր ամառանոցում։ Ն. Ակինյանը, հենվելով այս տվյալների վրա, առաջին անգամ հաշվումներով ցույց տվեց, որ 336—459 թթ. մարերի ամիսը համապատասխանում էր հուլյան տոմարի մայիսի 1—31-ին, իսկ 460—579 թթ.՝ ապրիլի 1—30-ին։ Ն. Ակինյանը եզրակացնում է, որ Աղվենի ժողովը տեղի է ունեցել 415—459 թթ., իսկ ավելի կոնկրետ՝ Շահապիվանի ժողովի գումարումից ոչ շատ ուշ, որովհետև «Աղվենի ժողովի կանոնները սերտ աղերսի մեջ են Շահապիվանի ժողովին կանոններու հետ»[28]։ Տոմարական հաշվումներ կատարեցինք մենք ևս[29]։

Ահա այդ հաշվումների պատկերը ըստ հայոց շարժական տոմարացույցի.

ա) Նավասարդի 1-ից — մարերի 13=է՝

$9 \times 30 + 12$ (մարերի 1—13-ը)=282 օր.

Թագավորական ընտանիքը ամառանոցում կարող էր գտնվել դիցուք մայիսի 1-ից սեպտեմբերի 30-ը։ Եթե ընդունենք, որ ժողովը տեղի է ունեցել ամռան առաջին օրը՝ հունիսի 1-ին, ապա հետ գնալով 282 օր, ստանում ենք օգոստոսի 22-ը, այսինքն՝ հուլյան տոմարով մարերի 13-ը ընկնում է օգոստոսի 22-ին։

բ) Ըստ տոմարացույցի Նավասարդի 1-ը օգոստոսի 22-ին է համապատասխանում 1844—1847 թթ.։ Մեզ հայտնի է, որ ամիսների նույն համապատասխանությունը կրկնվում է 1460 տարվա պարբերությամբ։ Հետևաբար, նույն բանը կունենանք՝ 384-ից (1844—1460=384) մինչև 387 թթ. (1847—1460=387)։ Հասկանալի է, որ 1460-ի երկու պարբերություն վերցնելը անիմաստ է, քանզի Վաչագան II-ը սկսել է թագավորել Ուտայրից հետո, մոտ 372 թ.։

Եթե ենթադրենք, որ ժողովը տեղի է ունեցել հուլյան տոմարի հունիսի 4-ին, ապա նույն հաշվումներով ստանում ենք 372—375 թթ.։ Մարերի 13-ը հունիսի 15-ին կլինի 328—331 թթ., իսկ օգոստոսի 31-ին՝ 20—23 թթ.։ Հունիսի 4-ից հետո Աղվենի ժողովի հրավիրումը գործնականորեն բացառվում է, որովհետև հեռանում ենք Վաչագան II-ի գահակալության մոտավոր սկզբից՝ 372 թ.։ Այսպիսով, մարերի 13-ը հունիսի 1—4-ին համապատասխանում է 372—387 թթ.։ Այդ թվականների հունիսի 1—4-ը, ամենայն հավանականությամբ, կարելի է գիտել Աղվենի ժողովի հրավիրման իրական ժամանակահատված։ Մենք 387-ից բարձր տարեթիվ չենք վերցնում, նկատի ունենալով, որ Վաչագան II—ի օրոք հատվածում թագավորել են նաև Մրհավան, Սատ. և Ասա։

---

26 Նույն տեղում, էջ 39։

27 Նույն տեղում, էջ 65—66։

28 Ն. Ակինյան, Նշվ. աշխ., էջ 560—561։

29 Շնորհակալություն ենք հայտնում դոցենտ Բ. Թումանյանին տոմարագիտական օգնության համար։

Նույն հաշվումներով մարերի 13-ը կհամապատասխանի հուլյան տոմարի մայիսի 15-ին՝ 452—455 թթ., իսկ մայիսի 1-ին՝ 508—511 թթ.։

Իսկ մայիսի 1—5-ը Աղվենի ժողովի հրավիրումը համապատասխանում է Վաչագան III-ի թագավորության շրջանին, բայց նշված և ստորև բերվող փաստարկներով մենք բացառում ենք Բարեպաշտի օրոք ժողովի հրավիրումը։ Ապրիլ ամսին մարերի 13-ը համապատասխանում է VI—VII դարերին, այսինքն անչափ հեռանում ենք անգամ Վաչագան III-ի թագավորության շրջանից։

Աղվենի ժողովի հրավիրման ժամանակահատվածը Ն. Ակինյանի մոտ ստացվել է 336—459 թթ. այն պատճառով, որ նա վերցրել է մարերի ողջ ամիսը և ոչ թե մարերի 13-ը։ Բացի այդ, նրա հաշվումներում նկատվում է մի փոքր անճշտություն։ Ստացած արդյունքը Ն. Ակինյանին մղել է դեպի Շահապիվանի ժողովը։ Շահապիվանի և Աղվենի կանոնների միջև տեսնելով որոշ նմանություն, նա եզրակացրել է՝

1) Աղվենի ժողովը հրավիրվել է Շահապիվանի ժողովից փոքր ինչ հետո,

2) Սսվաղեն թագավորին հաջորդել է նոր թագավոր՝ Վաչագան անունով[30],

Քանի որ Ն. Ակինյանի հետևությունները սկզբունքային նշանակություն ունեն հայագիտության համար, դիմենք Շահապիվանի և Աղվենի ժողովների կանոնների համեմատական ուսումնասիրության (տեղի սղության պատճառով բերում ենք համեմատական աղյուսակից բխող հետևությունները)։

Շահապիվանի և Աղվենի կանոնները մերձենում են՝

1. Կանոնների թվով, Շահապիվանում՝ 20, Աղվենում՝ 21, 2. մասամբ՝ կարգավորման առարկայով, 3. մասամբ՝ իրավախախտումների դեմ ներգործության միջոցով։

Երկու ժողովներն էլ արգելում են մերձամուսնությունը (Շահապիվանը՝ մինչև 4-րդ ծնունդը, Աղվենը՝ 3-րդ ծնունդը ներառյալ), եղբոր կնոջ հետ ամուսնանալը, տղամարդու քմահաճ կամքով ամուսնալուծությունը, նշխարներ տեղադրելը, մեռելների վրա կոծ դնելը։ Սակայն կարգավորման առարկայի տեսանկյունից մի քանի դեպքերի նմանությունները մեզ իրավունք չեն տալիս պնդելու, որ Աղվենի Հիմքում դրվել է Շահապիվանը։ Բանն այն է, որ մոտավորապես մեկ դար առաջ նույն հարցերը կարգավորել է նաև Աշտիշատի ժողովը։ Այդ նշանակում է, որ Աշտիշատի որոշումները կանոնական պատվանդան են եղել Շահապիվանի համար։

Շահապիվանի ժողովի բոլոր կանոնները սահմանում են ներկործության միջոցներ (առանձին կանոններ նույնիսկ մի քանիսը), իսկ Աղվենի 21 կանոններից՝ միայն 9-ը։ Շահապիվանի կանոնները աչքի են ընկնում խիստ պատժատեսակներով, իսկ Աղվենի կանոնները՝ ոչ։ Շահապիվանը պատժատեսակներ է սահմանում ազատների համար, իսկ Աղվենը՝ ոչ։ Պատիժներ սահմանելիս Շահապիվանը տարբերություն է դնում ազատի և շինականի միջև, իսկ Աղվենը՝ ոչ։ Շահապիվանը սահմանում է շատ այնպիսի պատիժներ, որոնք հայտնի չեն Աղվենին։

Նրանց տարբերությունը առավել չափով դրսևորվում է կարգավորման առարկայի տեսակետից։ Ի տարբերություն Աղվենի՝ Շահապիվանը կարգավորում է. 1) ամուսնական անհավատարմություն, շնացողություն, 2) երկյակի և կուսանի պսակի օրհնություն, 3) ամուսնալուծությունը կնոջ ամլության պատճառով, 4) կնոջ հեռանալը ամուսնուց, 5) առևանգմամբ ամուսնության հարցերը։ Եթե Աղվենը (կան. ԺԱ) արգելում է առանց պսակի կին առնելը, ապա Շահապիվանը այդ հարաբերությունը չի նորմավորում։

Հոգևոր հարաբերությունների կարգավորմանը Շահապիվանը նվիրում է 6 կանոններ (Ա, Բ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ), իսկ Աղվենը՝ 17։ Ընդ որում, նրանք միայն մի դեպքում են մերձենում, այն էլ մասնակիորեն, նշխարներն օգտագործելու կապակցությամբ։ Եթե այս ամենին ավելացնենք նաև այն, որ Շահապիվանը 3 կանոններ է ընդունել աղանդավորական (մծղնեից) շարժման դեմ, իսկ Աղվենը՝ ոչ մեկը, հեթանոսական հարաբերությունների մասին՝ 4 կանոններ, իսկ Աղվենը՝ միայն մեկը, մեր պատկերացումը կդառնա ավելի կատարյալ։

Շարժառիթների այսպիսի արմատական և սկզբունքային տարբերության պայմաններում անկարելի է պնդել, թե Շահապիվանի կանոնները Աղվենի համար եղել են սկզբնաղբյուր։ Իրականում Շահապիվանի և Աղվենի համար կանոնական պատվանդան է հանդիսացել Աշտիշատը։ Նրանց միջև որոշ նմանությունը պայմանավորված է նաև երկու երկրներում նույնատիպ հասարակական երևույթների գոյությամբ։

Մեզ մնում է համեմատել Աշտիշատի որոշումները Աղվենի կանոնների հետ և ամփոփել։

---

30 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 562։

Ցավոք, մեզ չեն հասել Աշտիշատի ժողովի կանոնները, մենք չգիտենք՝ քանիսն են եղել դրանք, ներգործության ինչպիսի միջոցներ են սահմանել։ Աշտիշատի ժողովի կանոնների մասին տեղեկություններ պահպանված են միայն Բուզանդի պատմության մեջ։ Թեև Աշտիշատում ընդունված կանոնների բովանդակության մասին Բուզանդի հաղորդած տեղեկությունները կցկտուր են, հաճախ՝ մեկ բառով արտահայտված և այդ բուռահատիկները ցրված են Արշակի և Պապի թագավորության ժամանակահատվածում, սակայն հավաքելով և ի մի բերելով դրանք, մենք զարմանքով և խորը ակնածանքով նկատում ենք, թե որքան բազմազան և բազմաբովանդակ են եղել Աշտիշատի ժողովի կանոնները և ժողովից դուրս Ներսեսի կողմից սահմանված կարգերը։

Վաչագան II-ի թագավորության սկիզբը համընկնում է Պապի գահակալության վերջին տարիներին։ Այդ շրջանում Հայաստանի ներքին կյանքը ալեկոծվում էր հակաաշտիշատյան, հականերսեսյան միջոցառումներից։ Պապ թագավորը էապես սահմանափակում է եկեղեցու իրավասությունը աշխարհիկ հարաբերությունների կարգավորման ասպարեզում։ Նրա միջոցառումները լայն արձագանք են գտնում Աղվանքի ազատանու, Վաչագան II-ի և աշխարհականների մոտ, արժանանում նրանց ջերմ համակրանքին։ Եվ դա հասկանալի է։

Ուռնայրի թագավորության և Ներսես Շինողի (?) ... Աղվանքի ներքին կյանքում, Հայաստանի օրինակով, իրականացվեցին եկեղեցու շահերից բխող մի շարք միջոցառումներ։

Աղվանքի իշխանավորները, հետևելով հայոց թագավորի և ազատանու օրինակին, սկսել էին ոտնահարել և սահմանափակել հոգևոր դասի իրավունքները, տեղիք տալով սրազում հակառակությունների աշխարհականների և հոգևորականների միջև։ Այսպես, Աղվենի կանոններից երևում է, որ ազատներն իրենց դաստակերտներից վտարում էին երեցներին, նոր երեցներ կարգում, եկեղեցիներում սեղան կանգնեցնում, նշխարներ տեղադրում, պատարագ կազմակերպում՝ առանց եպիսկոպոսի հետ համաձայնեցնելու (կան. Ի, ԻԱ). կիրակի օրը իրենց ծառաների հետ եկեղեցի չէին գնում (կան. ԺԹ). հանգուցյալի հոգեբաժինը չէին հանձնում եկեղեցուն (կան. ?). հանգուցյալի հիշատակին նվիրված պատարագ չէին կատարում (կան. Ե). թույլ էին տալիս եղբոր կնոջ հետ ամուսնանալ և անհասարակ՝ մերձամուսնություն, կոծը (կան. Ժ, ԺԲ). տղամարդիկ կամայապար արձակում էին իրենց կանանց և առանց պսակի կին առնում (կան. ԺԱ) և այլն։

Աղվենի ժողովը կարգավորեց նաև պտղի և տասանորդ կոչվող հարկերը (կան. Դ, ԺԸ)։ Բայց ինչու, մի՞թե Ուռնայրի օրոք նրանք չէին կարգավորված եկեղեցու շահերի ըստ ամենայնի հաշվառմամբ։ Հակառակությունների հիմնական պատճառն այն է, որ աշխարհականները բացահայտ ըմբոստություն էին դրսևորում եկեղեցու՝ Ուռնայրյան արտոնյալ իրավունքների դեմ, հատկապես՝ աշխարհականներից գանձվող պտղի և տասանորդ հարկերի կապակցությամբ։ Աղվենի ժողովի՝ հարկերի վերաբերյալ կանոնները ընդունվել են ոչ թե հարկերը խստացնելու (այլապես անհասկանալի կլիներ հոգևորականների ըմբոստությունը), այլ հնարավորին չափով մեղմացնելու համար։

Աղվենի ժողովի գումարման մյուս հիմնական պատճառն այն է, որ հոգևորականները ցանկանում էին կանոնական նորմերի միջոցով հնարավորին չափով հարթել և ցրել արհամարհանքի և անտարբերության այն մթնոլորտը, որ ստեղծվել էր իրենց դասի նկատմամբ։ Այդ նպատակով աշխարհականների համար սահմանվեցին մի շարք հոգևոր բնույթի պարտավորիչ կանոններ, ինչպես և կանոններ, որոնք ուղղված էին հոգևորականի դատապարտելի վարքի դեմ։

Հաշվի առնելով Աղվենի ժողովի գումարման պատմական իրավիճակը, մենք այստեղ չենք տեսնում աղքատանոցների, ուրկանոցների, կուսանոցների, որբանոցների, հյուրանոցների կազմակերպման և այդ հիմնարկների պահպանման համար անհրաժեշտ հարկերի գանձման վերաբերյալ Աշտիշատին հատուկ ծայրահեղությունների հետքերը։ Զնայած այդ բանին, Աղվենի որոշումների հիմքում դրված է Աշտիշատի կանոնական որոշումների ոգին, նրանից հեռացնելով այն ամենը, ինչ չի համապատասխանում ժամանակի պահանջներին և դասային ուժերի նոր հարաբերությանը։ Այդ բանում համոզվելու համար բերենք Աշտիշատի կանոնների ու Ներսեսի միջոցառումների և Աղվենի ժողովի կանոնների համեմատական աղյուսակը՝ ըստ կարգավորման առարկայի։

Աշտիշատի կանոններ և Ներսեսի միջոցառումներ.

ա) Ամուսնական հարաբերություններ՝ *1.° «Հեռու մնան ապականական մերձավոր ամուսնությունից, մանավանդ՝ 2.° հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից»*[31], *3.°*

---

[31] *Քաղվածքները բերվում են Բուզանդի Հայոց Պատմությունից Մալխասյանցի թարգմանությամբ, Երևան, 1947, էջ 145։ Ատողանիշով նշված են նույն կամ մերձեցած կանոնները։*

«Ներսեսի... ահից ոչ ոք չէր համարձակվում... մէկի կինը խլել և թողնել իր կին ամուսինը... նրա մահից հետո ամեն մարդ թաղավորից հրաման ստացավ՝ համարձակորեն թողնել իր ամուսին կանանց» (էջ 268—269), 4.° «կար մարդ, որ տաս կին էր փոխում» (էջ 269) կամ հիշենք՝ Արշակի ամուսնությունը Փառանձեմի հետ։ Նման ամուսնություններ կարող էին կատարվել առանց պսակի և օրհնության։

Աղվենի կանոններ.

ա) Ամուսնական հարաբերություններ՝ 1.° արգելվում է մերձամուսնությունը (կ. Ժ.), 2.° եղբոր կնոջ հետ ամուսնանալը (կ. Ժ.), 3.° առանց պատճառի կնոջից ամուսնալուծվելը (կ. ԺԱ), 4.° առանց պսակի և օրհնության կին առնելը (կ. ԺԱ)։

բ) Հոգևոր հարաբերություններ (Աշտիշատ, Ներսես)՝ 1.° «...ամենքի վրա տարածում էին առաքյալներից սահմանված կանոնները» (էջ 141), «բարեկարգեց եկեղեցական պաշտամունքը, եպիսկոպոսների, երեցների և սարկավագների (կյանքը)» (էջ 236), 2. եկեղեցուն հոգերաժին հանձնելու մասին Բուզանդը տեղեկություն չի հաղորդում, 3. Աղվենի «Ե» կանոնի մասին Բուզանդը տեղեկություն չի հաղորդում, 4.° «(նա դատապարտում էր)... ցանկական կրքերը... պոռնկությունը» (էջ 145), 5.° Պապ թագավորը «հողերի հաշվով սմեն գյուղում երկ-երկու պաշտոնյա էր թողնում, մի երեց և մի սարկավագ» (էջ 270), 6. «մեռած անասուն և արյուն չուտել» (էջ 145), 7.° «(նա դատապարտում էր)... նենգությունը... բամբասանքը» (էջ 145), 8. «(նա դատապարտում էր)... քսությունը... ուրիշին նախանձելը... ստախոսությունը, թշնամությունը» (էջ 145), 9. «Պտղիի և տասանորդների կարգն էլ, որ վաղուց ի վեր սովորություն էր դարձած եկեղեցուն տալ... հրաման հանեց (Պապը — Ս. Հ.), որ ոչ ոք չտա» (էջ 268), 10. «Հայր եպիսկոպոսների պատիվը... նրա մահից հետո (Ներսեսի — Ս. Հ.) ապականվեց ու փչացավ» (էջ 269) «ամեն մարդ համարձակ գործում էր՝ ինչ որ կամենում էր» (էջ 270), 11.° Խաղ եպիսկոպոսին Արշակը և ուրիշները ստիպում էին, «թե եկ Արշակավան ավանի եկեղեցում սեղան կանգնեցրուս» (էջ 169)։

գ) Հոգևոր հարաբերություններ (Աղվենի կանոններ)՝ 1.° Եպիսկոպոսների և երեցների հարաբերությունների մասին (կ. Ա.), քահանաներ և սարկավագներ ձեռնադրելու մասին (կ. Բ.), 2. եկեղեցուն հոգերաժին հանձնելու մասին (կ. Գ.), 3. հանգուցյալի հիշատակին նվիրված պատարագ (նվիրատվությամբ) կատարելու մասին (կ. Ե.), 4. դատապարտվում է վանացերեցի և վանականի գայթակղությունը (կ. Զ.), 5.° կարգավորվում է շեներում հոգևորականների թիվը. մեծ շենում՝ մեկ երեց, երկու մոտ ագարակներում՝ մեկ երեց (կ. Է, Թ), 6.° արգելվում է մեռած անասնի միս ուտելը (կ. ԺԳ), 7.° արգելվում է հոգևորականին բամբասելը (կ. ԺԵ), 8.° արգելվում է հոգևոր սաների, քահանաների, երեցների քինախնդրությունը, փոխադարձ կեղծ մեղադրանքները, ստախոսությունը (կ. ԺԶ), 9.° կարգավորվում են եկեղեցուն հանձնելիք պտղի, տասանորդի և հաս հարկերը (կ. Ժ, ԺԷ, ԺԸ), 10.° ազատներին արգելվում է երեցին դաստակերտից հեռացնելը և նոր երեց կարգելը (կ. Ի), 11.° արգելվում է ազատների նախաձեռնությամբ եկեղեցում սեղան կանգնեցնելը, նշխարներ տեղադրելը, պատարագը առանց եպիսկոպոսի թույլտվության (կ. ԻԱ)։

գ) Աղանդավորական.

• երկու աղբյուրներում էլ չկան համապատասխան կանոններ։

դ) Հեթանոսական.

• «Պետք չէ մեռածի վրա անհուսությամբ լաց ու կոծ անել, անչափ ու անկարգ սուգ անել (Բուզանդ..., էջ 145),

• արգելվում է մեռելների վրա կոծ դնելը (Աղվեն, կ. ԺԲ)։

ե) Ընդհանուր (աշխարհական).

• Բուզանդ՝ «(նա դատապարտում էր)... թշնամաց վրեժխնդրությունը... թշնամությունը... արյունահեղ սպանությունը...» (էջ 145),

• Աղվեն՝ սրգելվում է կռիվը և արյունահեղությունը (կ. Ը), անօրենությունը և մարդասպանությունը (կ. ԺԱ)։

Համեմատական աղյուսակը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ Աղվենի ժողովի կանոնների բացարձակ մեծամասնությունը կարգավորում է նույն հարաբերությունները, հաճախ նույն ձևով, ինչպես որ Արշակ-Ներսես-Պապ եռյակի գործունեության շրջանում։

Հատկանշական է, որ բերված 18 դեպքերից 16-ում արձանագրվում է կանոնական նորմերի (միջոցառումների) մերձեցում։ Այդ մերձեցումները ձևական բնույթ չեն կրում և պատահական չեն։ Նրանք բնութագրվում են աշխարհիկ և հոգևոր հարաբերությունների միատեսակ ընկալմամբ

և իրավական վերարտադրության հարազատությամբ, որը պայմանավորված է երկու երկրներում համանման հասարակական հարաբերությունների գոյությամբ և դարաշրջանի մերձավորությամբ։ Դա Պապի գահակալության վերջին և Վաչագան II-ի թագավորության առաջին տարիներն են։ Նրանց օրոք իրավական կարգավորման ենթարկվեցին հասարակության առավելապես հուզող հարցերը։ Երկու երկրներում էլ ամրողջ սրությամբ դրվեցին և նոր ձևով կարգավորվեցին եկեղեցու օգտին գանձվող հարկերը։ Նպատակը նույնն էր՝ հնարավորին չափով սահմանափակել եկեղեցու հարկային իրավունքները։ Կարգավորվեցին ամուսնական հարաբերությունները, հոգևոր բնույթի շատ խնդիրներ, որոնք ապացույց են այն բանի, որ այդ հարցերում Աղվանքում ևս արձանագրվում են նույնպիսի շեղումներ։ Պատահական չէ, որ իրավանորմեր չեն ընդունվել ընդդեմ աղանդավորականների, որովհետև այդ բանի համար չկար որևէ անհրաժեշտություն։

Ուշագրավ է և այն փաստը, որ Աղվենի ժողովը հրավիրվել է թագավորի ամառանոցում։ Դա եկեղեցու նվաստ կացության հետևանքն էր։ Այստեղ ժողովը ընթացավ Վաչագան II-ի ղեկավարության, աշխարհականների և հոգևորականների գործնական մասնակցության պայմաններում։ Հայոց պատմության մեջ նման երևույթ չի արձանագրված։ Աշտիշատը, ուր հրավիրված էր ժողովը, եկեղեցական հանդեսների հավաքատեղի էր. Ըստ Բուզանդի, Ներսեսը Աշտիշատի ժողովին մասնակից դարձրեց «Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին»[32]։ Արշակի և ավագանու մասնակցության մասին ոչ մի խոսք։ Ամենայն հավանականությամբ նրանք ժողովին մասնակից չեն դարձվել։ Աշտիշատի կանոնները չեն արտահայտում Արշակի կամքը։ Դա երևում է նրանից, որ ժողովից մի քանի տարի հետո հայոց արքան սկսեց գործով ոտնահարել Աշտիշատի որոշումները։ Երկրում սրվում են ավագանու և հոգևորականների հարաբերությունները, որ ավարտվում են նրանով, որ Արշակին փոխարինած Պապը բռնի ուժով վերացնում է Աշտիշատի ժողովով սահմանված կարգերը և լուրջ կերպով սահմանափակում եկեղեցու իրավունքները՝ աշխարհիկ հարաբերությունների կարգավորման ասպարեզում։ Աշխարհականների և հոգևորականների միջև հարաբերությունների սրումը հասնում է իր գագաթնակետին։ Հայոց ներքին կյանքի ծանր դասը ուսանելի եղավ Վաչագան II-ի համար։ Աղվենի ժողովի հրավիրման մեթոդը վկայում է այն մասին, որ նա ընտրում է հակասությունները հարթելու ուրույն ճանապարհ։ Ամփոփենք.

1. Աղվենի սահմանադիր ժողովը հրավիրվել է Վաչագան II-ի թագավորության և Շուփհաղիշոյի հայրապետության օրոք, ամենայն հավանականությամբ՝ 372/387 թթ., հունիսի առաջին օրերից մեկում:

2. Աղվենի սահմանադիր ժողովի որոշումների հիմքում դրվել են Աշտիշատի ժողովի կանոնները և Ներսեսի միջոցառումները՝ հաշվի առնելով Աղվանքի աշխարհիկ և հոգևոր դասերի ուժերի նոր հարաբերակցությունը և տեղական առանձնահատկությունները:

---

32 Բուզանդ, էջ 144։